

ԱՅԼԵՒԱՅԼՔ

1. Հայ Հանրապետութեան պետական թանգարանն եւ Մատենադարանը: — Հայաստանի խորհրդարանը անցեալ տարուան Սեպտ. 9ին օրէնք մը հրատարակած է, որով կ'որոշուի Հայոց ազգագրական ընկերութիւնը Հանրապետութեան Մայրաքաղաքն՝ որ առ այժմ Երեւանն է, փոխադրել: Ընկերութեան Թանգարանն պետական թանգարանի, իսկ գրատունը պետական մատենադարանի կը վերածուի: Վարչութիւնը դարձեալ Ազգագրական-մարդաբանական ընկերութեան ձեռքն է, որ արդէն սկսած է իր նոր գործունէութիւնը:

Հայոց Ազգագրական ընկերութիւնը թէեւ համեմատաբար նոր հաստատութիւն է — տասնամեակը 1916ին սօնուեցաւ — այսու հանդերձ նաեւ այս քիչ ժամանակին մէջ գործունէութեան արդիւնալիք անցեալ մը ձգած է իր ետեւ: Պատերազմի ընթացքին իր ձեռնարկած գործքերուն ամենէն յիշատակելիներն են 1. մերձաւորապէս 2 00 ձեռագիրներու Ցուցակի մը Ա. Հատորին հրատարակութիւնը, որ ընկերութեան քարտուղարին եւ Ազգագրական Հանդիսի հանրածանօթ խմբագրին քրտնաջան աշխատութեան արդիւնքն է: 2. Ընկերութիւնը համաշխարհային պատերազմի ընթացքին առանձին արշաւախումբեր կազմած եւ գրի առնուլ տուած է տաճկահայ փախստականներէ ժողովրդական բարքերու հայոց բազմաթիւ տեղեկութիւններ, բանահիւսութիւններ եւ ասութիւններ, որոնց ամբողջութիւնը՝ ինչպէս «Արմենիայէն» կիմանանք 50 հատոր պիտի կազմէ:

ԴՐ. Ն. Ա. Մ.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնս իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ հետեւեալ պատուական անձնաւորութիւններուն իրենց ի նպաստ Հանդիսի հրատարակութեան ըրած նուէրներուն համար՝

Վսեմապատիւ Տիգրան խան Բելքեան, որ միանգամայն Հանդիսի ամենաջերմ պաշտպանն ու բաժանորդն է երկայն ատենէ ի վեր՝ Քր. 1000

- Պր. Կարապետ Պէյ Մաթոսեան՝ Քր. 1000
- Պր. Գալարպետեան . . . . . Քր. 100
- Պր. Գ. Կիւլքենկեան . . . . . Կր. 1470
- Պարիս հանդիսութեան մը առթիւ  
(Պր. Ա. Չօպանեանի եւ Պր. Կ. Բասմաջեանի ձեռքով) . . . Քր. 515
- Պր. Ա. Արարհամեան . . . . . Կր. 120

Հանդէս կը նուիրեն՝

Հ. Բ. Ը. Միութիւնը 5 օրինակ՝ Միութեան Տէօրտ-Եղի եւ Հաճընի հիւանդանոցներուն, ինչպէս նաեւ Տէօրտ-Եղի, Հաճընի եւ Միրսինի Որբանոցներուն:

Պր. Մարաշեան 4 օրինակ՝ Շիշիի Հայ Որբանոցին. Հայ գրական-գեղարուեստական Ատրուշան Միութեան եւ Գարակեօզեան եւ Գալֆայեան Որբանոցներուն.

Պր. Գ. Ամատունի 2 օրինակ՝ Ս. Փրկչի հիւանդանոցին եւ Ս. Աննա Որբանոցին:

\* \* \*

Խմբագրութիւնս՝ թէ Հանդիսի ապապական ապահովելու եւ թէ միանգամայն իր բաժանորդներուն եւ բարերարներուն ղիլրութիւն ընծայելու համար՝ այս առթիւ հետեւեալը կը յայտարարէ. Ով որ տարեկան փոխանակ 15 Փրանկի՝ 20 Քր. կը վճարէ իբրեւ բաժանորդագին, այնպիսին կը ստանայ ոչ միայն Հանդէս Ամսօրեայն, այլ եւ Ազգային Մատենադարանի նոյն տարին հրատարակուած բոլոր հատորները: Սիւնուագ 300 Քր. վճարողը ցմահ բաժանորդ կը նկատուի Հանդիսի եւ մինչեւ իր մահը ձրի կը ստանայ թէ՛ Հանդէս եւ թէ՛ Ազգային Մատենադարանները, ի հարկէ սկսելով բաժանորդագրութեան տարիէն եւ օրէն: Այս վերջին կարգի բաժանորդները «Ազգային Մատենադարանական Միութիւն», մը կը կազմեն եւ իբրեւ այսպիսի ալ Խմբագրութեանս տարեցոյցին մէջ կ'արձանագրուին եւ թերթիս մէջ ամէն անգամուն կը ծանուցուին:

Ուրախութեամբ կ'իմացնենք, որ Միութեան առաջին հիմնաքարը դրուած է արդէն յանձին Պր. Կ. Բասմաջեանի, որ նորերս ցմահ անդամագրուեցաւ Միութեան:

ԽՄԲ. «ՀԱՆԴԻՍ»

